

լովը կարող է հայ ազգը հռովմէական Ս. Եկեղեցւոյ հետ դիւրաւ միանալ» :

Արդեամբք ալ Մովսիսի ընտրութեան լուրը հաճութեամբ լսուեցաւ Հռոմ : Ս. Ժողովը որոշեց առանձին թուղթ մը գրել առ Նորընտիրը « շնորհաւորելու յանուն Ս. Ժողովոյն անոր ընտրութիւնը . վասն զի կը յուսայ թէ անիկա իր եռանդովն եւ բարեացակամութեամբը, զոր ցոյց տուած է իր նամակներուն մէջ, ի գլուխ պիտի հանէ Ս. Աթոռի հետ միութիւնը » ¹⁰ :

Մովսէս ընտրութենէն ետքը փութացած էր ներկայանալ Շահին ի Սպահան, ստանալու համար անոր հաստատութիւնը : Այս առթիւ ունեցաւ P. Dimasի, Բոկոտն Կարմեղեանց մեծաւորի հետ տեսակցութիւն : Խօսակցութիւնը դարձաւ Ս. Ժողովի 19 փետրուար 1628ին գրած թուղթին շուրջը : Բանակցութեանց մասին P. Dimas հետեւեալը կը գրէ Ս. Ժողովին .

Հ. Ֆրա Դիմաս դէլլա Կրոչէ Բոկոտն Կարմեղեան գրէ յԱսպահանէ ի 29 . Նոյեմբերի 1629 առ Կարդինալն Լուդովիսի .

(Prop. Lettere di Polonia etc., tertia, an. 1631, vol. 73, f. 144.)

Յանցելում մարտի գրեցի պատասխանի թղթոյն Մեծապայծառ Տէրութեանդ Ձերոյ, յայտ արարեալ եթէ յորժամ հասանիցէ այսր

¹⁰ Թուղթ առ P. Dimas, 1 Յունիս 1630. Դիւան Տ. Հ. Ս. Ժողովոյ. Հատոր 110 (Lettere volgari, ամ 1620), թղ. 57: